

«Յնիւն այս իննսուն 1727 րդ տարին յԱմս-
տերպոս 1742:»*

Այս յիշատակագրութենէն զատ սոյն
էջին վերեւը կայ իշխանական թագ մը խաչով,
կենդրոնին վրայ կը տեսնուի աշխարհ, վրան
Գառն Աստուծոյ կանգնած գրօշակիր, զոր
բարձրէն կը լուսաւորէ նորածագ ճաճանչագեղ
արեւը:

Գառն Աստուծոյի գլխակողմը կայ սիրտ
մը, որուն վրայէն սերմեր վար կը ցանուին.
յետակողմը դարձեալ սիրտ մը՝ որուն վրայ
բուսած է շուշան ծաղիկի ցողուն մը:

Սերմնասիրիւ սրտին քով կանգնած է
վաստակաւոր երիտասարդ մը, որ աջովը հայելի
մ'ունի ազդրին վրայ եւ ձախովը կշիւ մը կուրծ-
քին վրայ. Աշխատութիւնն է այս:

Հուշանակիր
սրտին քովը կանգ-
նած է գեղանի
կոյս մը որ երկու
ձեռքով դափնի
պսակ մը նետելու
կը լլայ. Վարձա-
տրութիւնն է այս:

Աշխատութեան
պատկերին վրայ
գրուած է՝ ԽՈՒ-
ՀԵՄՈՒԹԻՒՆ.
վարձատրութեան

պատկերին վրայ՝ ԵՒ ԱՌԱՔԱՅԻՆՈՒԹԻՒՆ. ու եր-
կուքին ոտքերուն տակը՝ ՅԱՂԹԷ ԱՄԻ:

«Խոնէն-իւն է Աստուծոյն յաղթէ ամենայն:»

Բ. էջին ճիշդ կեդրոնին վրայ կը տեսնուի՝
թէեւ փոքր ինչ աւրուած՝ խաչելութեան նկար
մը ճաճանչաւոր եւ ամպածածուկ, վերեւը սուրբ
սկիհը, խաչն ու տանաքանեայ պատուիրանք,
որոնց ներքեւը կը կարգացուի ՄԱՔՈՒՐ ՀԱՒԱՏ.
Խաչելութեան մէկ կողմը ամպերու մէջէն կ'եր-
եւի խարիսիս մը, տակը ՀԱՍՏԱՏՈՒՆ ՅՈՒՄ

* Ծիշող այս ոսկի միտալին մէկ կապարեայ
օրինակն ալ կայ Միաբանութեան թանգարանը, որուն
նկատմամբ Հ. Սիմին Վ. Անտոնեան սա ծանօթու-
թիւնը գրած է. «Կապարեայ զաղափար ոսկի միտալի,
որ գտնուէր ի Հալէպ առ Հայազգայ ումմա յամմն
1867-1869:» Այսպիսի երկրորդ միտալի մը կապարեայ
օրինակն ալ կը գտնուի մեր քովը, որուն ընթերցումն
է. Ա. կողմ՝ «Յակոբէանի որդի յօշան տոհմ՝ Խաչ-
ղարեանց վաճառական ծնեալ Ջոզայ յայս թուական
1710, որ այժմ կայ յԱմստերպոս 1740: Խոնէնութիւն
եւ տաքնութիւն յաղթէ ամենայն:» Բ. կողմ՝ «Մա-
քուր հաւատ — հաստատուն յոյս — կատարեալ սէր:
Amsterdam 1757»

գրութեամբ, մէկ կողմն ալ սիրտ մը պսակի
մէջ առնուած, ներքեւը ԿԱՏԱՐԵԱԼ ՍԷՐ
գրուած, եւ ասոնց ամենուն ստորոտը՝ հրեշ-
տակ մը թեւատարած, որ ամպերու մէջ կը
սաւառնի. Յաւիտենականութիւնն է սա:

Խորհրդաւոր են այս ամէն պատկերները,
քանի վսեմ, քանի սրբազան անոնց վերտառու-
թիւններն ու խրատները, զորս նշանաբան առ-
նողը բնաւ չի խաբուիր եւ կ'ունենայ ամենակերպ
յաջողութիւն արտասուաց հովտիս դժուարին
պայքարներուն մէջ:

Կ'ըսուի թէ՝ Մահտեսի Մասեհ, որուն
մեծահամբաւ հարուստ վաճառական մը ըլլալը
գիտենք պատմութենէ, իւր ամէն մէկ զաւակին
անունովը շինել տուած է եղեր այսպէս առան-
ձին միտալներ, զորս անոնց խելահաս եղած ժա-

մանակը կուրծ-
քերէն կը կախէ
եղեր, պատուի-
րելով՝ որ ջանան
միշտ ունենալ,
Մահտէս հաւատ,
հաւատարման յոյս,
հաւորէալ սէր, եւ
իրենց բոլոր գոր-
ծերուն մէջ՝ Խոնէ-
ն-իւն եւ արա-
գիտութիւն:

Կը ցաւիմ շատ,

որ այս սիրուն բայց նաեւ խորհրդաւոր մի-
տալը ներկայացընելով հանգերձ՝ չեմ կարող
աւելի ընդարձակ տեղեկութիւններ գրել այս
մասին, եւ ըսել թէ գարուկէս հնութիւն ունե-
ցող ոսկին ինչպէս ճամբորդած եկած է Նիկո-
միդիա, Կոստանտին Իֆէնտիի քով: Կոստանտին
Իֆէնտի կը պատմէ, թէ ինքը զայն ժառան-
գած է իւր հօրմէն, որ ատենօք գնած է եղեր
Արմաշ գացող ուխտաւորէ մը:

Միտալին տէրն է, ինչպէս կը կարդանք
վրան, Կահրէի Մահմէտ Բ-ի Ալթաուն, Անպաւտցի՝
յորջորջեալ, որ ծնած է Քրիստոսի 1727ին, եւ
1742ին կը բնակէր յԱմստերպոս, 15 տար-
ւած եղած ատենն իսկ ունենալով արդէն վա-
ճառական տիտղոսը: Զուենքը աւելի տեղեկու-
թիւն այս անձի մասին. Հ. Ղեւոնդ Ալիշանի
ընդարձակ Մատենին մէջ հազիւ անգամ մը
կը հանդիպինք այս անուան. Ալթաուն Բ-ի

1 Անպաւտ Է գիւղ յԱրգուսա (Գողթան): Սի-
սական էջ 319: